

Է. Կ Ա Ն Տ

Վ. Լ. Ս Ո Լ Ո Վ Ե Ւ Ի Ւ *)

(Մահուան հարիւրամնակի առիթով)

Էմմանուէլ Կանտը փիլիսոփայական քննաբանութեան (Կրիտիցիզմ) հիմնադիրն է: Քննաբանն ուժիւնը մարդկային մաքի պատմութեան զլսաւոր շրջադարձ կէտն է: այնպէս որ փիլիսոփայութեան ամբողջ զարգացումը կարելի է երկուակի բաժանել, ի նկատի առնելով եթէ ոչ նրա բովանդակութիւնը, գոնէ մարդկային մոքի վերաբերմունքը դէպի այդ բովանդակութիւնը, այն է՝ ա) նախաքննաբանական (կամ Կանտից առաջ) և բ) յետաքննաբանական (կամ Կանտից յետոյ): Իր արած համեմատութեամբ խօսելով՝ (Կոպերնիկոսի հետ) Կանտը մարդկային մոքի համար նոր աշխարհ չդուաւ. բայց նոյն այդ խելքը նա դրեց այնպիսի հայեցակէտի վրայ, որ առաջւայ եղածը ուրիշ և աւելի ճշմարիտ տեսքով երևաց: Կանտի նշանակութիւնը չափազանցում են այն դէպքում միայն, երբ նրա վարդապետութեան մէջ ուզում են առնել ոչ թէ փիլիսոփայական էական խնդիրների կարգագույնութիւնն ու խորացումը, այլ նրանց ամենալաւ և նոյն իսկ վերջնական վճիռը: Այդ տեսակ խնդիրը սպառողի դեր Կանտը խաղացել է իսկապէս միայն բարոյագիտութեան բնագաւառում (այն է՝ բարոյագիտութեան «զուա» կամ ձևային մասում) իսկ փիլիսոփայութեան մնացած բաժիններում նա հանդէս է գալիս իրեւ մեծ հարցերի մեծ դրդողը, բայց ոչ երբեք վճռող:

*) Վ. Լ. Սոլովյով ընդարձակ գրութիւնից Կանտի մասին, մենք թարգմանում ենք միայն կենսագրական ժամը: Ծ. Բ.

Կանտի կենսագրաւթիւնը արտաքուստ ոչ մի հետաքրրքրութիւն չունի: Ամբողջ կեանքը նա անցկացրեց բացառապէս մտային աշխատանքի անձնատուր՝ նոյն այն Կեօնիդսբերգում, որտեղ ծնուել էր (1724 թ. ապրիլի 22-ին) և որաեղ մեռաւ (1804 թ. փետր. 12-ին): Նրա հայրը միջակ հարստութեան տէր թափ շինող էր: Ընտանիքը խիստ ազնիւ էր ու կրօնական՝ սիետիստական*): ոդով (մանաւանդ մայրը): Նոյն տեսակ ոդի էր իշխում նաև այն դպրոցին (Collegium Fredericianum), որտեղ Կանտն ստացաւ իւր միջնակարգ կրթութիւնը (1733—40): Այդ դպրոցի տեսուչ պատուր Ֆ. Ա. Շուլցը միենոյն ժամանակ աստուածաբանութեան պրօֆեսոր էր Կեօնիդսբերգի համալսարանում: Կանտը միջնակարգ դպրոցն աւարտելուց յետոյ մտաւ այս համալսարանի աստուածաբանական մասնաճիւղը: Պիետիստական դաստիարակութիւնն, անկասկած, հետք է թողել Կանտի վրայ, որոշելով նրա կենսիմացութեան ընդհանուր բնոյթն ու շեշտը, բայց նա գոհացում չէր տալիս կանտի մտաւոր որոնումներին, որոնք շատ վաղ զարթեցին նրա անհամաշափ զարգացած գլխում: Աստուածաբանութիւնից դուրս՝ նա յափշտակութեամբ ուսումնասիրում էր նաև աշխարհիկ գիտութիւնները՝ վիլիսոփայական ու բնա-չափագիտական: Համալսարանի դասընթացն աւարտեց հօր մեռած տարին (1746), այնպէս որ ստիպուած էր անմիջապէս ապրուստի միջոցներ որոնելու: Խննը տարի շարունակ երեք տան մէջ նա ընտանեկան ուսուցիչ եղաւ՝ մասսամբ Կեօնիդսբերգում, մասսամբ էլ մօտակայ մի կալուածքում:

Կանտի մտաւոր զարգացումը ճիշտ գիտութիւններից գընում էր դէպի գիլիսոփայութիւնը: Շատ ուշ՝ 45 տարեկան հասակում միայն նա հանդէս եկաւ իրեւ ինքնուրոյն գիլիսոփայ: Խոկ դրանից շատ առաջ նա հոչակուեց իրեւ առաջնաշակարգ գիտական: 1755 թ. նա հրատարակեց իր գիլիկա-ասաղաբաշխական տեսութիւնը տիեզերքի մասին, առանց իր անունը յիշատակելու (Allgemeine Naturgeschichte und Theorie

*): Աղանդ բողոքականութեան մէջ, ըստ որում գործն է փրկում մարդուն և ոչ միայն հաւատը: Հիմնադիր համարում է Ցպեներ աստուածաբանը: Սկսուել է XVII դարի վերջին բարդին: Թ. թ.

des Himmels—Երկնքի ընդհանուր բնապատմութիւնն ու տեսութիւնը), որ մի քանի տարի յետոյ Լապլասը կրկնեց իսկապէս: Այս տեսութիւնը, որ Կանտ-Լապլասի անունն է կրում, բայց որ իսկապէս պէտք է կոչովի Կանտի տեսութիւն, մինչեւ այսօր էլ ընդունուած է զիտութեան մէջ ընդհանրութիւնից: Մինչի այսօր դեռ գին ունին նաև նրա այն փոքրածաւալ զըրութիւնները բնագիտական բովանդակութեամբ, որ նա հրատարակեց այդ ժամանակները (1754—56)—այն է՝ երկրի պըտըտելու մասին իր առանցքի շուրջը, երկրի զառամութեան, երկրաշարժների, կրակի և այլն մասին:

1755 թ. Կանտը Կեօնիգսբերգի համալսարանում մասնաւոր (ալբիւատ) դասախոս նշանակուեց փիլիսոփայութիւնից և միայն 15 տարի անցնելուց յետոյ՝ 47 տարեկան հասակում ստացաւ օրդինար պրոֆէսորի պաշտօն, նշանակուելով տրամարանութեան և բնագանցութեան դասախոս: Այստեղ նա պաշտպանեց հետեւեալ աւարտագիրը (De mundi sensibilis atque intellegibili formâ et principiis (=Զգայական և իմանակի աշխարհի ձեր և սկզբունքների մասին):

Այս հեղինակութիւնը Կանտի առաջին փիլիսոփայական գործն է, որով հանդէս է զալիս իրեն ինքնուրոյն մտածող՝ իր նոր և կարեւոր հայեացքով ժամանակի և տարածութեան վրայ, որոնց նա վերաբրում է ներացի (առուբեկտիւ) բնոյթ: Ինչպէս երեսում է մի նամակից՝ դրանից քեզ առաջ նա մոտածել էր մի փոքրիկ աշխատութիւն գրելու «մարդկային իմացութեամ սահմանների մասին» և յուսով էր թէ նոյն տարին կը հրատարակի. բայց այդ գործը լոյս տեսաւ միայն 11 տարի յետոյ, երբ ընդարձակուելով դարձաւ «Ձուտ բանականութեան քննութիւն» (1781): Հետեւեալ 11 տարին լոյս տեսան Կանտի մնացած գլխաւոր աշխատութիւնները փիլիսոփայութեան վերաբերեալ. (Prolegomene zu einer jeden kunftegen Methaphysik, die als Wissenschaft wird auftreten können = նախադրութիւններ ամեն տեսակ ապագայ բնագանցութեան համար, որ կարող է հանդէս գալ իրեն գիտութիւն, 1783), որտեղ Կանտը՝ այս անգամ ուրիշ կարգով, արծարծում է իր կատարած բանականութեան քննութեան էութիւնը: Grundlegung zur Methaphysik des Sitten (=բարքերի բնագանցութեան հիմունքները, 1785), Metaphysische Anfangsgründe der Naturwissenschaft (=բնա-

զիտութեան բնագանցակական նախահմքերը, 1786), Kritik der praktischen Vernunft (=քննութիւն գործնական բանականութեան, 1788), Kritik der Urtheilskraft (=դատողական ուժի քննութիւնը, 1790). Religion Innerhalb der Grenzen der blossen Vernunft (=կրօնը միայն բաւականութեան սահմաններում, 1793):

Բացի յիշեալ լատիներէն աւարտադիրը, Կանտի փոքրածաւալ աշխատութիւններից վիլխոփայական հետաքրքրութեան համար կարևոր են. «Ընդհանուր պատմութեան իդէան» (1784), «Մշտնջենական խաղաղութիւնը» (1795), «Բնագանցութեան յաջողութիւնները Լէյրնիցից ու Ոլֆից*» յետոյց (1791), «Փիլիսոփայութեան մասին ընդհանրապէս» (1794) «Ֆակոլաէնների վէճը» (1798), աւելի պակաս հետաքրքրական է «Հոգետեսի անուրջները» (1766), որ գրուած է Դաւիթ Խւմի** ազդէցութեան տակ՝ քննական շրջանից առաջ: Այդ գրուածքի նիւթն է Սւեդինբորգի *** տեսիլներն ու տեսութիւնները, որոնց խիստ երկմուրէն է վերաբերում Կանտը, թէև չինեղ խորհըրդագդածի հիմնական մտքերից մինը ժամանակի և տարածութեան իդալական բնոյթի մասին ցոլացել է Կանտի լատիններէն աւարտագրում, իսկ այս նաև «Գուտ բանականութեան քննութեան» մէջ: Այս ենթադրութիւնը, որ շատերը չեն ուզում ընդունել, աւելի քան հաւանական է:

Բացի գրութիւնները Կանտը շատ է գրծել նաև իրեն դասաւու: Զնայած թոյլ ձայնին, նրա կարգացած դասախոսութիւններն իրանց բովանդակից ու բնուրոյն լինելու պատճառով բաւական մեծ բազմութիւն էին գրաւում: Բացի տրամարանութիւնն ու բնագանցութիւնը, նա կարդում էր նաև մատեմատիկա, բնագիտութիւն, բնական իրաւունք, բարոյախօսութիւն, բնական աշխարհագրութիւն, մարդարաննութիւն և իմացական աստուածաբանութիւն. այս վերջին առարկայից առած դասախոսութիւնները նա ստիպուած եղաւ դադարեցնե.

*) Գերմանացի փիլիսոփաներ. Լէյրնից (1646—1716), Ոլֆ (1679—1754): Ծ. Թ.

**) Անգլիացի փիլիսոփայ. (1711—1776): Ծ. Թ.

***) Էմանուէլ Սւեդէնբորգ—շվեդացի թէոսոֆ (1688—1772): Ծ. Թ.

լու արտաքին ճնշման պատճառով։ Ֆրիդրիկոս Արքա ժամանակ, երբ ազգային լուսաւորութեան և հոգեոր գործերի նախարարը Կանտին ունկնդրող Ֆոն-Յէտլիցն էր, պետութիւնն առանձին բարեհանութեամբ էր նայում Կանտին, բայց Ֆրիդրիկոս-Վիլհելմ Արքա գահակալութեան հետ փոխուեց այդ վերաբերմունքը, մանաւանդ երբ Յէտլիցի պաշտօնն անցաւ կղերական և յետադէմ վեօներին։ Կանտի հեղինակութիւնը Շնորհ միայն բանականութեան սահմաններում վերնագրով խիստ դժգոհութիւն առաջ բերեց կառավարութեան մէջ և Կանտը 1794 թ. արքայական հրամանադիր ստացաւ, որ սկսւում էր այսպէս։ «Նախ և առաջ ուղարկում ենք ձեզ ողորմած ողջոյն, մեր արժանաւոր և վեհուատում սիրելի հապատակի, Մեր վեհագոյն անձը վաղուց ի վեր մեծ դժգոհութեամբ էր նայում այն բանին, որ դռաք ի չարն էք գործ զնում ձեր փիլիսոփայութիւնը։ Ս. Գլքի և քրիստոնէութեան մի քանի գլխաւոր ու հիմնական ուսմունքները խեղաթիւրելով և ստորացնելով։ Յետոյ յարում է թէ յամառելու դէպքում Կանտը պէտք է ասպասի անդուրեկան կարգադրութիւններ։ Կանտը պատասխանեց, արդարացնելով իր տեսակէտը. վերջում յայտնում է թէ իրեւ հաւատարիմ հապատակ նա խոսանում է իր դասախոսութիւնների և գրուածների մէջ ամենին չշօշափել կրօնը՝ ոչ բնականը, ոչ էլ յայտնեալը։ Քիչ յետոյ նա հրաժարուեց նաև միւս կողմնակի դասախոսութիւններից և կարդում էր միայն տրամաբանութեան ու բնագանցութեան դասընթացը, իսկ 1797 թ. զգալով մօտալուս զառամութիւնը, բոլորովին ընդհատեց դասախոսելը։ Նա մտադիր էր կեանքի մնացորդը նուիրելու իր սկսած ընդարձակ աշխատութեան, որը պէտք է բովանդակէր բոլոր գիտութիւնների հանրագիտութիւնը, բայց մտային ընդունակութիւնների թուլանալը արգելք եղաւ այդ գործը շարունակելու և աշխատութիւնը մնաց հատուածական։ Երկու ամիս էր պակաս 80 տարեկան դառնալուն, որ Կանտը մեռաւ ծերութեան անզօրութիւնից։

Կանտի անձնաւորութիւնն ու կեանքը ներկայացնում են մի բոլորովին ամբողջական պատկեր, որտեղ խոհականութիւնը մշտապէս գերակշռում է աֆֆէկտուներին և բարոյական պարտաւորութիւնը կրքերին ու ստորին շահերին։ Իր գիտա-փիլիսոփայական կոչումն ըմբռնելով իրեւ գերագոյն պարտականու-

թիւն, Կանտը նրան ենթարկեց ամեն բան: Դրա համար նա յազթեց մինչև իսկ բնութեան՝ իր թոյլ ու հիւանդու մարմինը դարձնելով ամենալարուած մտային եռանդի յենարան: Կանտը կարծում էր, որ ընտանեկան կեանքը արգելք է մտաւոր աշխատանքին, ուստի և առ միշտ մնաց մնակ, թէս մեծ յակում ունէր դէպի սրտակցութիւնը: Չնայած որ մեծ սէր ունէր դէպի աշխարհագրութիւնն ու ճամբարդութիւնները, նա մինչև վերջն էլ դուրս չեկաւ Կեօնիգսբերգից, որ դրանով արգելք չիմի իր պարտականութիւնները կատարելու: Լնելով ի բնէ հիւանդու՝ նա իր կամքի ուժովն ու կեանքի կանոնաւոր ընթացքով հասաւ խորին ծերութեան առանց մի անգամ հիւանդանալու:

Սրտի պահանջներին Կանտը գոհացում էր տալիս բարեկամութիւն անելով այնպիսի մարդկանց հետ, որոնք ոչ միայն չէին խանդարում, այլև և օգնում էին նրա մտաւոր աշխատանքին: Նրա ամենամտերիմ բարեկամն էր վաճառական Գրինը, որ գործնական մեծ ընդունակութիւնների հետ ունէր և այնպիսի մտաւոր զարդացում, որ ամբողջ զջուտ բանականութեան քննութիւնը նախապէս անցել էր նրա հաւանութեան բովից: Մտերմութիւնը կարող է արդարացնել նաև այն միակ մարմնական թուլութիւնը, որ ունէր Կանտը. նա սիրում էր լաւ ճաշեր մտերիմների փոքրիկ շրջանում: Բայց այդ էլ հնաւոր դարձաւ նրա կեանքի երկրորդ կիսին միայն, երբ նշանակուեց պաշտօնական պրոֆէսոր և հեղինակութիւններն ըսկեցին արդիւնք բերել, իսկ մինչև 1770 թ. նա տարեկան ստանում էր 62 տալեր^{*)}: Վերջերը նրա տնտեսական դրութիւնն այն աստիճան լաւացաւ, որ կարողանում էր փող խնայել, որով և մի տուն գնեց: Բայց պէտք է ասել որ Կանտը ոչ փողասէր էր և ոչ էլ ժլատ: Այսպէս երբ մինհստր Ֆոն-Ցէտլիցը նրան ամբիոն էր առաջարկում Հալէի համարարանում կը լինակի ոռօնիկով, նա մերժեց այդ ձեռնտու առաջարկը: Լսելով որ իր բարեկամներից մէկի որդին գրավաճառութիւն է սկսում, նրա գործին նպաստած լինելու համար չնշին գնով զիջաւ նըրան իր գրուածքների հրատարակութիւնը, ընդունելով ուրիշ գրավաճառների անհամեմատ աւելի շահարեր պայմանները:

^{*)} Արծաթ փող, որ 1857 թ, կարդադրութեամբ = 3 մարկ ոսկու՝ մօտ 1 ր. 50 կ., Ծ. թ.

Կանտի գեղագիտական զարգացումը շատ աւելի ստոր էր նրա մտաւոր ու բարոյական զարգացումից։ Նա ըմբռնում էր գեղեցկի վերացական նշանակութիւնը, բայց այդ բնագավառում նրա մէջ կենդանի հետաքրքրութիւն չէր զարթեցնում։ Արուեստներից խոհարարականն էր, որի մէջ նա ամենից շատ ճաշակ էր գտնում և որը նրա սիրած նիւթն էր կանանց հետ զրոյց անելիս։ բանաստեղծութեան մէջ յարգում էր խրատական ճիւղը միայն։ Երաժշտութիւնը տանել չէր կարող։ Դէպի պլաստիք արուեստները անտարբեր էր լիովին։ Գեղարուեստական տարրի այս սակաւութիւնը շատ հասկանալի է կանտի մէջ։ Նրա կրչումն էր՝ ամեն տեղ խոր բաժանում մտցնել լինելութեան իդէալական ձևի և ռէալ բովանդակութեան միջև, մինչդեռ գեղեցիկ և գեղարուեստի էութիւնը այն երկուսի անբաժանելի միութիւնն է։

Թարգմ. Ն. Ա.